Չնայելով, որ տէր Թոդիկը 700 ընտանիքից բաղկացած մի ամբողջ թաղի աւագ քահանան էր, չնայելով, որ բացի դրանից, նա վիճակաւոր առաջնորդի գործակալի պաշտօն էր կատարում, եւ այդ բոլորից առատ արդիւնք էր ստանում (էլ չեմ խօսում դպրոցի մասին) — այնոամենայնիւ, նրա ապրուստը, նրա կեցութիւնը խիստ չքաւոր էր: Մի քանի մթին սենեակներ, ծեփած սպիտակ կաւով, նեղ բակ ցածրիկ շրջապարիսպով, — այդ բոլորը կացուցանում էին նրա անշուք բնակարանը, ուր տիրում էր մշտական փոշի, աղտ, խորին տխրութեան հետ: Դրացիները տէր հօր այսպիսի չքաւոր կեցութիւնը վերաբերում էին նրա անփառասիրութեանը եւ նրա աշխարհի վայելչութիւններին չցանկացող բնաւորութեանը: Դա մասամբ իրաւացի կը լինէր, եթէ ագահներն էլ այնպիսի յատկութիւններ չունենային: Ժլատները նոյնպէս անապատի մէջ են ապրում, որպէս տէր Թոդիկը իր մերկ ճգնարանում: Դերվիշութիւնը առհասարակ գրաւիչ է լինում եւ հրապուրում է ռամկի սնահաւատութիւնը, թէեւ դերոիշի քրքրոած վերարկոի տակ շատ անգամ ծածկւում է մի շահասէր եւ հարստահարիչ ոգի...

Վերջին տարիներում, մայրս չկարողանալով վարժապետի ամսականը վճարել, ինձ բոլորովին ծանրաբեռնեցին տնային գործերով, այնպէս որ ժամանակ չէի գտնում դասերս պատրաստելու: Ամբողջ ցերեկը հոգիս դուրս էր գալիս կամ երէցկնոջ, կամ տէր հօր պատոերները կատարելով: Մնում էր պարապոել միայն գիշերով, իսկ այդ եւս շատ անգամ չէր յաջողւում, որովհետեւ ճրագ եւ լոյս չունենալու համար միշտ ստիպոած էինք քնել շատ վաղ: Քեռուս տան հետ աւելի յարաբերութիւններ չունէինք. մայրս իր եղբայրներից ոչինչ օժանդակութիւն չէր ստանում, եւ եթէ հնար լինէր, նա կը թողնէր այն խեղդոած խրճիթը, որ քեռիներս շնորհել էին մեզ բնակութեան համար: Մեր յոյսը մնացել էր մեր բարերարի՝ որսորդ Աւօյի վրայ: Սա էլ դպրոցի վերաբերութեամբ ինձ չէր օգնում, եւ մինչեւ անգամ խիստ անախորժ էր թւում նրան, որ ես այնտեղ ուսում էի առնում: Ես դեռ չեմ մոռացել այն խօսքը, որ մի օր հայրական բարեսրտութեամբ որսորդը ասաց ինձ.

— Ֆարհատ, դուրս եկ այդ դժոխքից, դու բոլորովին կը բթանաս այնտեղ:

— Դուրս գամ ի՞նչ անեմ, ի՞նչ սովորեմ, — հարցրի ես:

— Մտի՛ր քեռիներիդ արհեստանոցը, զէնք շինել սովորի՛ր, — պատասանեց նա:

— Միթէ՞ ուսումը վատ է:

— Այդ ուսում չէ, որ դու սովորում ես: